

Luys Lnyu®



ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Proj

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ	2
3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	6
4. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ	12
5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ	14
6. ԱՄՓՈՓՈՒՄ	15

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, որ կառավարությունն ամեն տարի պետք է կազմի և հաստատի առաջիկա երեք տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ կամ ՄԺԾ ծրագիր կամ Ծրագիր), իսկ այնուհետև այն պետք է ուղարկվի Ազգային ժողով և հրապարակվի: ՄԺԾԾ-ն կառավարության՝ առաջիկա երեք տարիների հարկաբյուջետային և ծախսային քաղաքականությունների հիմնական ուղղությունները, նպատակները և սկզբունքներն արտացոլող կարևոր փաստաթուղթ է: Ընդ որում, դրա՝ առաջին տարվան առնչվող մասը կարելի է համարել հաջորդ տարվա պետական բյուջեի նախնական նախագիծ: ՄԺԾԾ-ն կարևորվում է նաև այն պատճառով, որ դրանում արտացոլվում են կառավարության՝ տնտեսության զարգացումների վերաբերյալ սպասումները:

Նկատի ունենալով ՄԺԾԾ-ի կարևորությունը՝ «Լույս» հիմնադրամը յուրաքանչյուր եռամյա ծրագրի հաստատումից հետո դրա վերաբերյալ հրապարակում է վերլուծություն¹:

Օրերս կառավարությունը հաստատեց և Ազգային ժողով ուղարկեց 2026-2028թթ. ՄԺԾԾ-ն²: Այս Ծրագիրը նախորդներից, մասնավորապես, տարբերվում է նաև նրանով, որ այն կազմվել է ՀՀ տնտեսության վրա արտաքին գործոնների բարենպաստ ազդեցության ակնհայտ թուլացման (որոշ մասի գրեթե ամբողջությամբ չեզոքացման) պայմաններում: Նշված արտաձին բարենպաստ գործոնները դրականորեն են ազդել ՀՀ տնտեսության վրա: Միաժամանակ, անհերքելի է, որ դրանք զգալիորեն փոխել են տնտեսության կառուցվածքը և զարգացման հեռանկարները: Ենթադրվում է, որ այս հանգամանքը պետք է մեծ չափով արտացոլված լինի ՄԺԾԾ փաստաթղթում:

Սույն՝ 2026-2028թթ. ՄԺԾԾ-ի վերաբերյալ, վերլուծության սկզբում ներկայացված են Ծրագրի հիմքում ընկած մակրոտնտեսական կանխատեսումները: Հաջորդիվ ներկայացված են առաջիկա երեք տարիների համար պլանավորվող հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները և կանխատեսվող հարկաբյուջետային շրջանակը, այդ թվում՝ պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը: Առանձին բաժնով ներկայացված են նաև 2026-2028թթ. ՄԺԾԾ փաստաթղթում ներառված

¹ «Լույս» հիմնադրամի՝ ՄԺԾԾ-ի վերաբերյալ նախորդ վերլուծություններին կարելի է ծանոթանալ այստեղ՝ <https://www.luys.am/...>:

² 2026-2028թթ. ՄԺԾԾ-ն հրապարակված է ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում՝ https://minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/ (այցելվել է 24.06.2025թ.)

մակրոտնտեսական ու հարկաբյուջետային ռիսկերը: Վերջում ամփոփված են կարևոր եզրահանգումները:

2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ


ՀՀ տնտեսությունում 2021-2024 թվականներին միջինում գրանցվել է 8.2% իրական աճ: Ծրագրում նշված է, որ այդ աճը զգալիորեն պայմանավորված է եղել մի շարք կարևոր իրադարձություններով, որոնց մի մասի ազդեցությունն արդեն իսկ չեզոքացել է, մնացած մասինն ամբողջությամբ կչեզոքանա առաջիկա տարիներին: Մասնավորապես, այդպիսի իրադարձություններից են՝ 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով արձանագրված՝ դեպի Հայաստան մարդկանց ներհոսքը, զբոսաշրջության զգալի ավելացումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխումը, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացումը և պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճերը: Զգալի է եղել նաև 2023 թվականի սեպտեմբերի վերջին Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց տնտեսական ազդեցությունը:

2021-2024 թվականներին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների աճով (նպաստումը՝ միջինում 6.2 տոկոսային կետ): Պահանջարկի տեսանկյունից աճին նպաստել է ինչպես ներքին պահանջարկի (մասնավոր սպառման ու մասնավոր և պետական ներդրումների), այնպես էլ արտահանման աճը:

Տնտեսական աճի տեմպերը 2025 թվականի առաջին եռամսյակում որոշակիորեն դանդաղել են. գրանցվել է ՀՆԱ-ի 5.2% իրական աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 7.2%-ի դիմաց: Աճը հիմնականում պայմանավորված է ծառայությունների ոլորտով (ներառյալ առևտուրը). ոլորտը տնտեսական աճին նպաստել է 5.6 տոկոսային կետով: Շինարարության և գյուղատնտեսության նպաստումները զգալիորեն ավելի փոքր են՝ համապատասխանաբար 0.5 և 0.3 տոկոսային կետ: Արդյունաբերությունը, որն անցած տարվա առաջին եռամսյակի աճին ունեցել է էական՝ 3.9 տոկոսային կետ նպաստում և աճել էր 30.4%-ով, 2025թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կտրուկ նվազման պատճառով զգալիորեն՝ 2.2 տոկոսային կետով հակազդել է տնտեսական աճին:

Տնտեսական աճի նախորդ չորս տարիների փաստացի և ընթացիկ, ինչպես նաև առաջիկա երեք տարիների կանխատեսումների վերաբերյալ տվյալները ներկայացված են Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Տնտեսական աճի կանխատեսումների համեմատականը, %



Գծապատկերից երևում է, որ ՀՀ կենտրոնական բանկի և միջազգային այնպիսի հեղինակավոր կառույցների, ինչպիսիք են Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) և Համաշխարհային բանկը (ՀԲ), կանխատեսումները զգալիորեն տարբերվում են ՄԺԾԾ-ի հիմքում ընկած՝ ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսումից: Մասնավորապես, Հայաստանի տնտեսական աճն ընթացիկ և առաջիկա տարիների համար Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումներով էապես ավելի ցածր է ՀՀ կառավարության կանխատեսումներից: Այսպես, ՀԲ-ն կանխատեսում է, որ տնտեսական աճը 2025-ին կլինի ընդամենը 4.0%, 2026-ին՝ 4.2%, 2027-ին՝ 4.5%: Նույն տարիների համար ԱՄՀ-ն կանխատեսում է տարեկան 4.5% տնտեսական աճ: ՀՀ կենտրոնական բանկը կանխատեսումը կատարել է զարգացման երկու տարբեր սցենարների համար՝ «Ա» սցենար, որը ենթադրում է պահանջարկի ընդլայնում կամ առաջարկի զսպում և «Բ» սցենար, որով ենթադրվում է պահանջարկի զսպում կամ առաջարկի ընդլայնում: «Ա» սցենարի համաձայն՝ կանխատեսվում է, որ 2026 և 2027 թվականների տարեկան տնտեսական աճն էապես ցածր է լինելու ՄԺԾԾ-ով ամրագրված՝ ՀՀ ՖՆ կանխատեսած ցուցանիշներից: Իսկ «Բ» սցենարով 2025 և 2026 թվականների համար կանխատեսված ցուցանիշներն են ՖՆ կանխատեսումից էապես ցածր:

ՄԺԾԾ-ում նշված է, որ 2025 թվականի համար սպասվում է շուրջ 5.1%, իսկ միջնաժամկետում³ միջինում 5.3% տնտեսական աճ՝ ընթացիկ տնտեսական զարգացումների, պետական կապիտալ ծախսերի դերի պահպանման, Սոթքի հանքավայրի անխափան գործունեության, ինչպես նաև Ամուլսարի շահագործման և կառուցվածքային բարեփոխումների հնարավոր ազդեցությունների արդյունքում:

³ ՖՆ կողմից միջնաժամկետ կանխատեսումներն իրականացվել են 2026-2030թթ. համար:

Ընդ որում, համաձայն Ծրագրի՝ աճը հիմնականում պայմանավորված կլինի ծառայությունների աճով:

Աղյուսակ 1. 2026-2028թթ. ՄԺԾԾ հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2022	2023	2024	2025	2026	2027	2028
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	8,501.4	9,492.5	10,193.4	10,976.1	11,886.9	12,892.7	13,976.5
Տնտեսական աճ, %	12.6	8.3	5.9	5.1	5.1	5.3	5.2
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	8.0	3.1	1.4	2.5	3.0	3.0	3.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	8.3	-0.6	1.5	2.6	3.0	3.0	3.0
Գնաճ (միջին), %	8.6	2.0	0.3	2.5	3.0	3.0	3.0
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %							
Արդյունաբերություն	6.9	-3.0	3.6	2.1	6.5	6.3	5.7
Գյուղատնտեսություն	-2.8	-0.4	1.5	1.8	2.0	2.1	2.0
Շինարարություն	18.6	15.6	14.1	7.9	5.3	5.0	5.1
Ծառայություններ	18.4	12.5	7.5	5.6	4.9	5.3	5.3
Զուտ հարկեր	8.1	11.0	-1.6	7.1	6.5	6.5	6.4
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %							
Վերջնական սպառում	4.3	6.8	4.2	7.0	4.5	4.8	4.2
Պեղական	-2.2	10.2	-9.5	6.7	-3.4	-0.5	-4.6
Մասնավոր	5.6	6.2	6.7	7.0	5.8	5.6	5.4
Հիմնական միջոցներում ներդրումներ ⁴	14.0	9.0	11.2	9.6	10.8	7.7	8.0
Պեղական	17.9	31.6	7.3	21.6	28.2	9.3	11.2
Մասնավոր	13.5	5.8	11.9	7.6	7.5	7.4	7.2
Արտահանում	59.9	31.2	28.3	-36.6	-1.9	5.1	5.0
Ներմուծում	35.0	30.9	27.9	-33.5	-1.5	4.6	4.4
Արտաքին հատված (ՀՆԱ-ի նկատմամբ, %)							
Ընթացիկ հաշիվ	0.3	-2.3	-3.8	-5.0	-4.7	-4.7	-4.7
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-0.8	-0.8	-1.8	-3.8	-4.0	-4.0	-4.0
Արտահանում	51.9	59.3	71.7	42.5	40.2	39.2	39.8
Ներմուծում	52.6	60.1	73.5	46.3	44.2	43.2	43.7
Դրամական փոխանցումներ	7.4	4.0	2.9	2.9	2.9	2.8	2.8

⁴ Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կադրված կապիտալ ներդրումները, քանի որ 2019-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն, այլ կերպ ասած՝ դրա մեջ ներառվում են նաև վիճակագրական սխալները:

Ակնկալվում է, որ թե՛ վերջնական սպառումը և թե՛ ներդրումները 2025թ. կաճեն՝ համապատասխանաբար 7.0%-ով և 9.6%-ով:

ՄԺԾ ծրագրով ակնկալվում է, որ 2025 թվականին ապրանքային արտահայտությամբ արտահանումը և ներմուծումը կնվազեն՝ համապատասխանաբար 36.6%-ով և 33.5%-ով՝ պայմանավորված վերամշակման և վերաարտահանման նպատակով թանկարժեք մետաղների ներմուծման գործոնի չեզոքացմամբ: Ենթադրվում է նաև, որ դրանք 2026-2030 թվականներին կաճեն՝ միջինում համապատասխանաբար 3.7% և 3.2%-ով:

Քանի որ 2025 թվականի առաջին երեք ամիսներին ապրանքների գծով արտահանման ծավալների անկումը գերազանցել է ներմուծման ծավալների անկմանը, ապրանքների գծով արտաքին առևտրի մնացորդը նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ վատթարացել է: Նշված ժամանակահատվածում ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի նվազումը և ՀՀ-ից մեկնած զբոսաշրջիկների թվաքանակի աճը բացասաբար են ազդել ծառայությունների հաշվեկշռի վրա:

Համաձայն Ծրագրի՝ սպասվում է, որ 2025թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կվատթարանա՝ հասնելով ՀՆԱ-ում 5% մակարդակի: Ակնկալվում է, որ միջնաժամկետում, 2022-2024թթ. առաջացած դրական արտաձին գործոնների ազդեցությունների չեզոքացման (մասնավորապես, վերաարտահանման գործոնի չեզոքացման, ՌԴ-ից զբոսաշրջիկների հոսքերի կայունացման) պայմաններում, ընթացիկ հաշվի պակասուրդը կկայունանա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակի շուրջ:

Համաձայն ՄԺԾԾ-ի՝ դեպի ՀՀ զբոսաշրջային մեծ հոսքերը, ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ տեղափոխվելը, զբաղվածների թվաքանակի ավելացումը, ինչպես նաև պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացումը հանգեցրել են ՀՀ տնտեսության ներուժային աճի տեմպի բարձրացման՝ նախկին 4-4.5% գնահատված միջակայքից հասնելով 5-5.5% միջակայքի: Նշվում է, որ չնայած այն հանգամանքին, որ կանխատեսված տնտեսական աճերի պարագայում 2021-2026թթ. տնտեսական աճը միջինում գերազանցում է կառավարության նպատակադրած 7% տնտեսական աճի ցուցանիշը, այնուամենայնիվ, միջնաժամկետում նշված ներուժային աճը պահպանելու և ավելի բարձր կայուն աճի հասնելու համար անհրաժեշտ են տնտեսական աճի ներուժի բարձրացմանը միտված լրացուցիչ ջանքեր: Նշված թիրախին հասնելու համար հետագա տարիներին ՀՀ տնտեսությունը պետք է զարգանա առաջարկի վրա հիմնված տնտեսական աճի մոդելով, որտեղ

տնտեսական աճի առանցքային շարժիչը պետք է լինի արտահանելի հատվածը և արտահանումը:

Ծրագիրը, բնականաբար, չի բացառում նաև տնտեսության բացասական զարգացումների հնարավորությունը: Մասնավորապես, «տնտեսական աճի ռիսկերի նյութականացման» սցենարը ենթադրում է 2022-2023թթ. ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում առաջացած դրական շուկի աստիճանական շրջադարձ, որի արդյունքում տնտեսական աճի տեմպը դանդաղում է՝ 2025-ին՝ մինչև 3.0%, իսկ 2026-ին՝ 1.3%, որից հետո սկսում է աստիճանաբար արագանալ՝ 2027-ին կազմելով 3.8%, իսկ 2028-ին՝ 4.7%: Ի դեպ, համաձայն Ծրագրի («Մակրոտնտեսական կանխատեսումների ռիսկերը» ենթագլուխ, էջ 37-38)՝ զարգացման այն սցենարի իրականանալու հավանականությունը, որի դեպքում 2025թ. և առաջիկա երեք տարիներին տնտեսական աճի տեմպը գտնվելու է էապես ավելի ցածր՝ 2-4% տիրույթում, ընդամենը 0.03-0.04-ով է փոքր 4-6% միջակայքում տնտեսական աճի տեմպ ակնկալող սցենարի հավանականությունից (այս սցենարի՝ որպես առավել հավանական սցենարի հիման վրա է կազմված ՄԺԾԾ-ն): Ուստի անցանկալի զարգացումների պատճառով ՄԺԾԾ-ի ծրագրային հետազոծից շեղվելը բավական հավանական են համարում հենց ՄԺԾԾ-ի հեղինակները:

3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ⁵


2026-2028թթ. ՄԺԾ ծրագրի համաձայն՝ միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության նպատակներն են՝ ՀՀ անվտանգության ամրապնդումը, տնտեսական ենթակառուցվածքների զարգացումն ու հասանելիության բարձրացումը, մարդկային կապիտալի զարգացումը:

Ծրագրում նշվում է, որ միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի տնտեսական և պաշտպանական ենթակառուցվածքներում, մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը:

⁵ Պետական բյուջեի եկամուտների և ծախսերի կազմում նախորդ տարիների կանխատեսումներում համադրելիության նպատակով ներառված է հիպոթեքային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես կանխատեսվող, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների ցուցանիշների համար: Միաժամանակ, 2024-2026թթ. ՄԺԾԾ և 2024թ. պետական բյուջեի ցուցանիշները ճշգրտվել են պահուստային ֆոնդի չափով, բացի այդ՝ փաստացի ցուցանիշները, 2023-2025 թթ. և 2024-2026 թթ. ՄԺԾԾ-ները և 2023թ. պետական բյուջեի ցուցանիշները ճշգրտվել են ԼՂՀ զուտ վարկավորման չափով:


Համաձայն Ծրագրի՝ պետական բյուջեի եկամուտները, առաջիկա երեք տարիներին աճելով միջին հաշվով տարեկան 9.1%-ով, 2028 թվականին կհասնեն 3,603.2 մլրդ դրամի կամ ՀՆԱ-ի նկատմամբ 25.8%-ի: Ուշագրավ է, որ 2026-2028թթ. ՄԺԾԾ-ում ևս (ինչպես և նախորդ՝ 2025-2027թթ. ՄԺԾԾ-ում) պետական բյուջեի եկամուտների (այդ թվում՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի) ընթացիկ և եռամյա ժամկետի առաջին երկու տարիների համար կանխատեսվող մեծությունները նախորդ ՄԺԾԾ-ի համեմատ զգալիորեն նվազեցվել են (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատականը, մլրդ դրամ



ՀՆԱ-ում պետական բյուջեի եկամուտների տեսակարար կշիռների կանխատեսումների համեմատականը ներկայացված է Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում




2025թ. հունվար-ապրիլ ամիսների արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 992.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14.9%-ով, իսկ հարկերը և տուրքերը կազմել են 948.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14.5%-ով:

Ուշագրավ է, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության կանխատեսման հարցում 2026-2028թթ. ՄԺԾ ծրագրով ցուցաբերված լավատեսությունը անհամեմատ ավելի չափավոր է՝ համեմատած նախորդ՝ 2025-2027թթ. ՄԺԾ-ի: Այսպես, համաձայն Ծրագրի՝ «միջնաժամկետում հարկային վարչարարության բարելավման, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում տարեկան միջինում 0.3 տոկոսային կետով՝ 2030-ին հասցնելով 25.5%-ի»: Մինչդեռ, միջին տարեկան բարելավման՝ նախորդ՝ 2025-2027թթ., ՄԺԾ-ով ակնկալվող տեմպը կրկնակի բարձր էր՝ 0.6 տոկոսային կետ: Բացի այդ, նախորդ ՄԺԾ-ով ենթադրվում էր, որ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը արդեն 2027 թվականին կհասնի 26.2%-ի, այն դեպքում, երբ 2026-2028թթ. ՄԺԾ-ով ակնկալվող տարեկան միջին բարելավման տեմպերի պահպանման պարագայում այդպիսի մեծության, լավագույն դեպքում, հնարավոր կլինի հասնել միայն 2033 թվականին:

Համաձայն Ծրագրի՝ 2025-ին հարկային վարչարարության բարելավման և օրենսդրության փոփոխությունների արդյունքում ակնկալվում է, որ հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կբարելավվեն շուրջ 0.7 տոկոսային կետով՝ կազմելով 24.2%: **Ծրագրում չի հիշատակվում, որ նախորդ ՄԺԾ-ով սպասվում էր, որ 2024թ. հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը պետք է կազմեր 24.4%, մինչդեռ, փաստացի արձանագրվեց 0.9 տոկոսային կետով պակաս ցուցանիշ: Թերևս դա է պատճառը, որ 2025թ. համար ծրագրված ցուցանիշը Ծրագրով վերանայվել է՝ 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված 25.1%-ը նվազեցվել է 0.9 տոկոսային կետով: 2026 և 2027 թվականների համար ևս նոր ՄԺԾ-ով հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ավելի մատչելի թիրախներ են ընտրվել՝ համապատասխանաբար 24.7% և 24.9%՝ նախորդ ՄԺԾ-ի 25.9%-ի և 26.2%-ի փոխարեն: Հարկային եկամուտների՝ 2026-2028թթ. ՄԺԾ-ով 2025թ. համար սպասվող դրամական մեծությունը ևս վերանայվել է՝ այն (2,655.9 մլրդ դրամ) 5.6%-ով կամ 156.4 մլրդ դրամով ցածր է 2025-2027թթ. ՄԺԾ-ով պլանավորված մեծությունից՝ 2,812.3 մլրդ դրամից: Այսինքն՝ ակնհայտ է, որ այդպիսի լուրջ վերանայումները կատարվել են վերջին ամիսների զարգացումների պատճառով:**

Գծապատկեր 4. Հարկային եկամուտների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում




Ծրագրում նշվում է, որ 2025թ. հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեի ծախսերը կազմել են 931.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14%-ով:

Ակնկալվում է, որ 2025-ի պետական բյուջեի ընդհանուր ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կավելանան շուրջ 1.8 տոկոսային կետով՝ կազմելով 30.8%: Այս մեծության առումով առկա են հիմնավոր կասկածներ, քանի որ 2024 թվականին նույնպես ցուցանիշի փաստացի մեծությունը զգալիորեն՝ 1.5 տոկոսային կետով պակաս է նախորդ՝ 2025-2027թթ. ՄԺԾԾ-ով սպասվող 30.5%-ից: Ի դեպ, 2025-ի ցուցանիշը նույնպես նոր ՄԺԾԾ-ով նախորդ Ծրագրի համեմատ ավելի ցածր է ծրագրված՝ 0.6 տոկոսային կետով (30.8)% (Գծապատկեր 5):

Ակնկալվում է, որ 2025թ.-ի պետական բյուջեի ընդհանուր ծախսերում ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կավելանան 0.8, իսկ կապիտալ ծախսերը՝ 1.0 տոկոսային կետով: Համաձայն Ծրագրի՝ ծախսերի ծավալը նախորդ տարվա համեմատ կաճի շուրջ 14.3%-ով՝ կազմելով 3,376.9 մլրդ դրամ:

⁶ ՄԺԾԾ-ի աղյուսակներում ներկայացված են միայն «ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» ցուցանիշի թվային տվյալները, սակայն քանի որ դրանք գրեթե նույնն են ինչ կապիտալ ծախսերը, սույն վերլուծության մեջ «ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» եզրույթի փոխարեն օգտագործված է «կապիտալ ծախսեր» եզրույթը:


Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



Ի դեպ, 2026-2028թթ. ՄԺԾԾ-ում ևս (ինչպես և նախորդ ՄԺԾԾ-ում) կենսաթոշակի և նվազագույն աշխատավարձի բարձրացման մասին չի խոսվում: Իսկ հաշվի առնելով, որ համաձայն Ծրագրի՝ սպասվում է, որ 12-ամսյա գնաճը 2025-ին կազմելու է 2.6%, իսկ առաջիկա երեք տարիներին լինելու է տարեկան 3%-ի շրջանակներում, ստացվում է, որ կենսաթոշակը և նվազագույն աշխատավարձն իրական արտահայտությամբ 2028-ի վերջում 2025-ի տարեսկզբի համեմատ 12.1%-ով ցածր են լինելու $[100 \times (1+0.026) \times (1+0.03) \times (1+0.03) \times (1+0.03) - 100 \approx 12.1\%]$: Այսինքն՝ սպասվում է, որ բնակչության մի ստվար հատվածի կենսամակարդակն էականորեն ընկնելու է: Ավելին, 2025 թվականի անցած ամիսների զարգացումները վկայում են, որ ամենայն հավանականությամբ տարեվերջին գնաճի տեմպը շատ ավելի բարձր կլինի, քան Ծրագրով ակնկալվող 2.6%-ը: Մասնավորապես, այս մտավախության օգտին է խոսում այն փաստը, որ պաշտոնական տվյալներով մայիս ամսին 12-ամսյա գնաճն էապես ավելի բարձր է եղել՝ 4.3% (այս մասին 17.06.2025թ. ասուլիսում խոսել է նաև ՀՀ կենտրոնական բանկի նախագահը):


Համաձայն Ծրագրի՝ ակնկալվում է, որ ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ. կկազմի 24.5%, իսկ առաջիկա երեք տարիներին շարունակաբար կնվազի՝ 2026թ. կազմելով 24.3%, 2027-ին՝ 23.3%, 2028-ին՝ 22.7% (Գծապատկեր 6): Ըստ Ծրագրի՝ կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ. կկազմի 6.3%, իսկ 2026-ից 2028 թվականներին՝ 5.9%:

Գծապատկեր 6. Պետական բյուջեի ծախսային բաղադրիչների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում




Համաձայն Ծրագրի՝ սպասվում է, որ 2025 թվականին պետական բյուջեի պակասուրդը կաճի և կկազմի ՀՆԱ-ի 5.5%-ը: Նշվում է, որ հաջորդող տարիներին ծրագրվում է իրականացնել էական հարկաբյուջետային կոնսոլիդացիա, որով պայմանավորված՝ ակնկալվում է, որ պետական բյուջեի պակասուրդը ծրագրային ժամանակահատվածում կհաջողվի շարունակաբար նվազեցնել՝ 2028թ. հասցնելով 2.8%-ի (իսկ 2030թ.՝ նույնիսկ 1.0%-ի):

Գծապատկեր 7. Պետական բյուջեի պակասուրդը, % ՀՆԱ-ում



Համաձայն ՄԺԾԾ-ի՝ **կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2024թ. 48.0%-ի համեմատ զգալիորեն կաճի՝ 2025թ. վերջում կազմելով 52.6%, իսկ 2028թ. վերջում՝ 55.4%:** Չնայած ՄԺԾԾ-ն եռամյա ծրագիր է և ընդգրկում է 2026-2028թթ. ժամանակահատվածը, այնուամենայնիվ, նշվում է, որ ցուցանիշը 2029 թվականից սկսած կնվազի և 2030-ի վերջում կկազմի 51.7%: Առաջիկա երեք տարիներին պարտքի բեռի աճին նպաստող հիմնական գործոնները լինելու են պարտքի իրական տոկոսադրույքի աճը և առաջնային պակասուրդը, իսկ տնտեսական աճը պարտքի նվազեցման ուղղությամբ է ներգործելու:

Գծապատկեր 8. Կառավարության պարտքի դինամիկան



Ինչպես երևում է Գծապատկեր 8-ից, ՄԺԾԾ-ով ենթադրվում է, որ **2028թ. վերջում կառավարության պարտքը կկազմի 7.7 տրիլիոն դրամ՝ այն 2024թ. վերջի փաստացի մեծության համեմատ աճելու է 58.2%-ով**: Չնայած դրան, Ծրագրում միևնույն է նշված է, որ «միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության պարտքը գնահատվում է կայուն և կառավարելի»:
Այնուամենայնիվ, ՄԺԾԾ-ի համաձայն՝ պարտքը շարունակում է զգալուն մնալ հատկապես տնտեսական աճի ցնցումների նկատմամբ, պարտքի կառուցվածքը գնահատվում է միջին կամ բարձր խոցելի, իսկ իրականացված տարբեր հետազոտություններն ուրվագծում են էական անորոշություններ:

4. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ

ՄԺԾԾ-ում (ինչպես ցանկացած կանխատեսման դեպքում), հիմնական մակրոտնտեսական և հարկաբյուջետային կանխատեսումները կատարելիս նշվել են այն ռիսկերը, որոնց հետևանքով, հեղինակների կարծիքով, փաստացի մեծությունները կարող են տարբերվել սպասումներից: Ծրագրում նշված են երկու խումբ ռիսկեր՝ *մակրոտնտեսական և հարկաբյուջետային*:

Մակրոտնտեսական ռիսկերը, իրենց հերթին բաժանված են երկու մասի՝ արտաքին միջավայրից բխող և ներքին միջավայրից բխող:

Որպես արտաքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկեր Ծրագրում նշված են.

- Ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում առաջացած դրական գործոնների (ՌԴ-ից զբոսաշրջային հոսքերի, դրամական փոխանցումների, ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների դեպի ՀՀ տեղափոխման) չեզոքացումը և հոսքերի հեղշրջումը,

- ՌԴ-ում ՀՀ ապրանքների արտահանման՝ վերջին տարիների վերափոխումների արդյունքում ընդլայնված շուկայի նեղացումը,

• ՀՀ ապրանքների արտահանման մատակարարումների լոգիստիկ խնդիրների խորացումը,

• Աշխարհաքաղաքական իրավիճակը, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտությունների առկայությունը,

• Տարածաշրջանային հակամարտությունների (մերձավորարևելյան և ռուս-ուկրաինական հակամարտություններ) արդյունքում պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճը,

• Առևտրային պայմանների սրացման և առևտրային քաղաքականության անորոշությունների պահպանման արդյունքում գործընկեր երկրների տնտեսական աճերի, հետևաբար և ՀՀ արտաքին պահանջարկի դանդաղումը:

Ներքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորված են՝

• պետական կապիտալ ծախսերի հնարավոր թերակատարմամբ,

• Սոթքի հանքավայրի ստորգետնյա եղանակով շահագործման հետ կապված խոչընդոտներ ի հայտ գալու հետևանքով հանքավայրի արդյունահանման դանդաղմամբ,

• Ամուլսարի շահագործման հնարավոր հետաձգմամբ կամ սպասվածից ավելի քիչ հանքարդյունահանմամբ,

• ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների և արտահանման ու ներդրումների խթանման քաղաքականության ակնկալվող արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտմամբ,

• Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց ՀՀ տնտեսական գործընթացներում սպասվածից ավելի դանդաղ ինտեգրմամբ,

• Բնակլիմայական անբարենպաստ պայմանների շարունակական դրսևորման հետևանքով գյուղատնտեսության ճյուղում հնարավոր բացասական զարգացումներով:

Ծրագրում դիտարկվել են հետևյալ հիմնական **հարկաբյուջետային ռիսկերը**.

• ներքին կամ արտաքին ցնցումների ներքո մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումների ռիսկը,

• հարկեր/ՀՆԱ ցուցանիշի՝ հարկային վարչարարության ազդեցությամբ սպասվողից ավելի դանդաղ բարելավման ռիսկը,

• միջազգային ֆինանսական շուկաների անկայունության և ֆինանսավորման պայմանների վատթարացման ռիսկը,

• լրացուցիչ ֆինանսավորման պահանջ առաջացնող այլ ներքին ռիսկեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց՝ ՀՀ տնտեսությանը ինտեգրման դանդաղումը և աջակցության ծրագրերի երկարաձգումը, տարածաշրջանային անվտանգային միջավայրի վատթարացման պայմաններում անվտանգությանն ու պաշտպանությանն ուղղվող միջոցների ծավալի աճի

լրացուցիչ կարիքի առաջացումը, արտահանելի հատվածի համար տնտեսական աջակցության լրացուցիչ ծրագրերի իրականացումը և այլն:

• *ծախսերի թերակապարման և ավելի թույլ հարկաբյուջետային ազդակի ձևավորման ռիսկը:*

Ուշագրավ է, որ թվարկված ռիսկերի վերաբերյալ Ծրագրում նշված է, որ ճիշտ է, 2026-2028թթ. ՄԺԾԾ հարկաբյուջետային սցենարում նախատեսվել են բավական բարձր՝ ՀՆԱ-ի շուրջ 6%-ը կազմող կապիտալ ծախսեր, այնուամենայնիվ, հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի կատարողականները, առկա է ծրագրավորված ցուցանիշների թերակատարման խորացող ռիսկ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ ինչպես ամբողջական պահանջարկի և ընթացիկ տնտեսական ցուցանիշների, այնպես էլ երկարաժամկետ ժամանակահատվածում՝ տնտեսության ներուժի վրա:

Ըստ Ծրագրի՝ սցենարային վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար ձեռնարկվել են համարժեք միջոցառումներ՝ ՀՆԱ 0.2-0.3%-ի շրջանակներում պահուստային ֆոնդերի նախատեսման և գանձապետական կայունացման հաշվում առնվազն ՀՆԱ 1% չափով «իրացվելիության բարձիկի» ստեղծման ճանապարհով: Բացի այդ, առաջացող ռիսկերին դիմագրավելու տեսակետից յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում կնախատեսվեն լրացուցիչ «բարձիկներ» պահուստային ֆոնդերում:

5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Համաձայն ՄԺԾԾ-ի՝ այն կազմվել է ՀՀ կառավարության ծրագրի առաջնահերթություններին համահունչ, և միջնաժամկետ հատվածի համար նախատեսված սոցիալական, կրթական, առողջապահական, ենթակառուցվածքային բնույթի առաջնահերթ միջոցառումների իրականացման արդյունքում կապահովվի մի շարք առանցքային թիրախների իրագործումը: Նշվում է, որ վերոհիշյալ թիրախներն ապահովելու համար ձևավորվել է այնպիսի միջնաժամկետ մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակ, որը «մի կողմից՝ կապահովի անհրաժեշտ ռեսուրսներ ՀՀ կառավարության ռեֆորմների արդյունավետ իրագործման համար, մյուս կողմից՝ համաշխարհային տուրբուլենտ ժամանակաշրջանում կպահպանի հետագա կայուն զարգացման համար անկյունաքարային նշանակություն ունեցող մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունությունը»: Մինչդեռ, մի շարք թիրախների ապահովման առումով առկա են լուրջ մտահոգություններ:

Անդրադառնանք ՄԺԾԾ-ում նշված թիրախներից երկուսին:

• Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման գործընթացի մեկնարկում, ինչը կապահովի քաղաքացիների համար առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը:

Այս թիրախը նախորդ՝ 2025-2027թթ. ՄԺԾԾ-ում ևս նշված էր՝ նախատեսվում էր, որ առողջության համապարփակ ապահովագրության համակարգն աստիճանաբար պետք է ներդրվեր արդեն 2025 թվականից, սակայն 2025թ. պետական բյուջեով այդ նպատակով ծախս չի նախատեսվել: Ի դեպ, ՄԺԾԾ տեքստում ներդրման մեկնարկի ժամկետ չի նշվում:

• Մինչև 2028-ը առնվազն 500 մանկապարտեզների և 300 դպրոցների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման՝ ՀՀ կառավարության ծրագրով սահմանված թիրախի ապահովում՝ այդ թվում ապահովելով դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով:

500 մանկապարտեզների և 300 դպրոցների կառուցումը, հիմնանորոգումը և վերանորոգումը նախատեսված է ՀՀ կառավարության ծրագրով 2021-2026թթ. ժամանակահատվածի համար: Ամենայն հավանականությամբ, գիտակցելով նշված ժամկետում այս թիրախին հասնելու անհրաժեշտականությունը, այն հետաձգվել է մինչև 2028թ.: Ի դեպ, այս ծրագրի իրականացման համար նախատեսված ծախսերը տարիներ շարունակ թերակատարվում են: Մասնավորապես՝ դրանք 2024-ին թերակատարվել են 64.7%-ով, իսկ 2025թ. առաջին եռամսյակում՝ 65.0%-ով: Կառավարության գործունեության ծրագրի ավարտին մնացել է մեկ տարի, սակայն 30.04.2025թ. դրությամբ հիշյալ թիրախի շրջանակներում շահագործման է հանձնվել ընդամենը 45 դպրոց (10 հիմնանորոգված և 35 կառուցված) և 204 նախադպրոցական հաստատություն⁷:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

Վերջին տարիներին աշխարհաքաղաքական իրադրությունների շուրջ ձևավորված արտաժին գործոնները, որոնք 2022-ից սկսած բարենպաստ ազդեցություն էին գործում ՀՀ տնտեսության վրա, վերջին շրջանում զգալիորեն թուլացել են (գործոնների մեծ մասը գրեթե ամբողջությամբ չեզոքացել են): Այդ թուլացմամբ պայմանավորված բացասական զարգացումներն արդեն իսկ զգալի չափով ուրվագծվում են: Այսպես, տարեցտարի դանդաղում է տնտեսական աճի տեմպը՝ 2022-ին այն կազմել է 12.6%, 2023-ին՝ 8.3%, 2024-ին՝ 5.9%: Ընդ որում, վատթարացումն առավել ակնառու է տնտեսության կարևորագույն նշանակություն ունեցող այնպիսի ոլորտում, ինչպիսին է արդյունաբերությունը: Անցյալ տարվա

⁷ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2025/04/30/Nikol-Pashinyan-meeting-30-04> (այցելվել է 23.06.2025թ.)

առաջին եռամսյակում այն 30.4% աճի շնորհիվ ապահովել էր եռամսյակային տնտեսական աճի զգալի մասը, իսկ արդեն մեկ տարի անց՝ 2025թ. առաջին եռամսյակում, 2.2 տոկոսային կետով հակազդել է տնտեսական աճին, քանի որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոլորտում արձանագրվել է կտրուկ անկում:

Շեշտակի նվազել են նաև արտահանումն ու ներմուծումը, նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ զգալիորեն վատթարացել են արտաքին առևտրի մնացորդը և ընթացիկ հաշվի պակասուրդը:

Քանի որ 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը կազմվել է վերը նշված արտաձին գործոնների մի մասի չեզոքացման, իսկ մնացած մասի՝ զգալի թուլացման պայմաններում, դրանում, բնականաբար, չէին կարող ընդհանրապես «արհամարհվել» ոչ բարենպաստ մակրոտնտեսական զարգացումները:

Պատահական չէ, որ 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով վատթարացման ուղղությամբ վերանայվել են ընթացիկ և առաջիկա տարիների մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք կանխատեսվել էին նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրով: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ նույնիսկ այս վերանայումներով հանդերձ՝ նոր Ծրագրի հիմքում դրված տնտեսական զարգացման սցենարի լավատեսությունը բավարար չափով հիմնավորված չէ:

Ընդհանուր առմամբ, որոշ կանխատեսումներ լուրջ մտահոգությունների տեղիք են տալիս.

- Նախորդ՝ 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով միջնաժամկետ հեռանկարում նախատեսվում էր պետական բյուջեի եկամտային ցուցանիշների բավական ագրեսիվ աճ: Այն ներկայիս՝ 2026-2028թթ. ծրագրով զգալիորեն «մեղմվել է»: Նոր Ծրագրում նախորդի համեմատ զգալիորեն նվազեցվել են նաև հարկեր/ՀՆԱ ցուցանիշի կանխատեսումները: Հաշվի առնելով 2024թ. արդյունքներով արձանագրված թերհավաքագրումների փաստը, այնուամենայնիվ, ցուցանիշների կանխատեսումները նույնիսկ նվազեցումից հետո շարունակում են թերահավատության տեղիք տալ: **Մասնավորապես՝ անհավանական է թվում, որ հարկեր/ՀՆԱ-ն կհաջողվի 2024-ի 23.5%-ից 2028-ին հասցնել 25.1%-ի կամ ցուցանիշը բարելավել 1.6 տոկոսային կետով, այն դեպքում, երբ 2021-2024թթ. ընթացքում դրա բարելավումն ընդամենը 0.5 տոկոսային կետ է կազմել:**

- Նոր Ծրագրով նախորդի համեմատ նվազեցվել են նաև պետական բյուջեի ծախսերի կանխատեսվող մեծությունները: Ընդ որում, տոկոսային արտահայտությամբ կապիտալ ծախսերը նվազեցվել են անհամեմատ ավելի շատ, քան ընթացիկ ծախսերը: Նվազեցումը սպասելի էր՝ հաշվի առնելով վերջին ժամանակներում «քրոնիկ» դարձած թերակատարումները: Պատահական չէ, որ

Ծրագրի հարկաբյուջետային ռիսկերին վերաբերող մասում որպես կարևոր ռիսկ անդրադարձ է կատարվում ծախսերի թերակատարմանը: **Նշվում է, որ չնայած 2026-2028թթ. ՄԺԾԾ հարկաբյուջետային սցենարում նախատեսվել են բավական բարձր՝ ՀՆԱ շուրջ 6%-ը կազմող կապիտալ ծախսեր, այնուամենայնիվ, հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի կատարողականները, առկա է ծրագրավորված ցուցանիշների թերակատարման խորացող ռիսկ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ ինչպես ամբողջական պահանջարկի և ընթացիկ տնտեսական ցուցանիշների, այնպես էլ երկարաժամկետ ժամանակահատվածում՝ տնտեսության ներուժի վրա:**

- Սպասվում է, որ բնակչության մի ստվար հատվածի կենսամակարդակն էականորեն ընկնելու է: Ծրագրում չի խոսվում առաջիկա երեք տարիներին կենսաթոշակի և նվազագույն աշխատավարձի բարձրացման մասին: Իսկ հաշվի առնելով ծրագրվող ժամանակահատվածում գնաճի կանխատեսվող մեծությունները, ստացվում է, որ չբարձրացման դեպքում կենսաթոշակը և նվազագույն աշխատավարձն իրական արտահայտությամբ 2028-ի վերջում 12.1%-ով ցածր են լինելու, քան 2025-ի տարեսկզբին: Ավելին, հիմնավոր մտավախություն կա, որ այս տարեվերջին գնաճի տեմպը, ամենայն հավանականությամբ, էապես ավելի բարձր կլինի, քան Ծրագրով ակնկալվող 2.6%-ը:

- Կառավարության պարտքն այս և առաջիկա երեք տարիներին մինչև այժմ արձանագրվածից շատ ավելի կտրուկ է աճելու: Ծրագրով նախատեսվում է, որ բացարձակ մեծությամբ այն 2028թ. վերջում կանցնի 7.7 տրիլիոն դրամից և 2024թ. վերջի փաստացի մեծությանը՝ շուրջ 4.9 տրիլիոն դրամին կգերազանցի 58.2%-ով: ՀՆԱ-ի համեմատ կառավարության պարտքի կշիռը 2028թ. վերջին կկազմի 55.4%՝ 2024թ. փաստացի մեծության համեմատ ավելանալով 7.4 տոկոսային կետով:

2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի համաձայն՝ «պարտքը շարունակում է զգայուն մնալ հատկապես տնտեսական աճի ցնցումների նկատմամբ, պարտքի կառուցվածքը գնահատվում է միջին կամ բարձր խոցելի, իսկ իրականացված տարբեր հետազոտություններն ուրվագծում են էական անորոշություններ»:

Չնայած 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում մասամբ արձանագրված են որոշ ակնհայտ մտահոգիչ միտումներ, իսկ կատարված վերանայումները որոշ չափով վկայում են փոփոխված իրողությունների գիտակցման մասին, այնուամենայնիվ, ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ վերանայումները ոչ թե բխում են քաղաքական հստակ ռազմավարությունից, այլ ընդամենը պարզ արձագանք են անկառավարելի իրադարձություններին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: